ՆԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կառավարում, մագիստրատուրա,
1-ին կուրս

ԱՐՑԱԽԻ ԿՈՐՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հիմնաբառեր. *Արցախի Հանրապետություն, գյուղատնտեսություն, պարենային անվտանգություն, տարածք, հիդրոէլեկտրակայան*

Արցախյան երկրորդ պատերազմը, որը սկսվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին և ավարտվեց նոյեմբերի 10-ին, խոր հարված հասցրեց հայկական երկու հանրապետություններին: Իր աննախադեպ դաժանությամբ աչքի ընկնող 44-օրյա պատերազմը հանգեցրեց զգալի տարածքային և մարդկային կորուստների, բացասական ազդեցություն թողեց ոչ միայն Արցախի Հանրապետության, այլ նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Հոդվածում վերլուծվել են պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության տնտեսության առանձին ճյուղերում ի հայտ եկած հիմնական խնդիրները և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա, ինչպես նաև դիտարկվել են հայկական երկու հանրապետություններին սպառնացող պարենային անվտանգության խնդիրները:

Ներածություն: Հայկական երկու հանրապետությունների վրա վերջին տարիներին ամենասուր և ցավալի ազդեցությունն է թողել Արցախյան 44-օրյա պատերազմը: Արցախյան առաջին պատերազմի վերքերը չսպիացած՝ Արցախի և Հայաստանի Հանրապետությունները ստացան մի նոր հարված՝ կրելով տարածքային և մարդկային կորուստներ, ունենալով տնտեսության անկում, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացած անձինք, 90.000-ից ավելի բռնի տեղահանվածներ և հոգեբանական խոր անկում:

Թեման արդիական է այնքանով, որ «սահող պատերազմը» սպառնալիք է ոչ միայն Արցախի, այլև արդեն Հայաստանի Հանրապետության համար:

Գրականության ակնարկ: Հետազոտությունն իրականացվել է վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա, օգտագործվել են մասնագիտական գրքեր և մենագրություններ:

Հետազոտության մեթոդաբանությունը: Վերլուծությունը կատարվել է մի քանի ուղղություններով՝ վեր հանելով ԱՀ-ի տնտեսության զարգացման միտումները մինչև Արցախյան 44-օրյա պատերազմը և դրանից հետո:

Հետազոտությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով կիրառվել են դիտարկման, համեմատության, վիճակագրական վերլուծության, ընդհանրացման և աղյուսակային մեթոդները: Պատերազմի ազդեցությունն ավելի հստակ պատկերացնելու համար համեմատական վերլուծությամբ դիտարկվել են մինչ պատերազմը և պատերազմից հետո ԱՀ-ի տնտեսական ցուցանիշները: Հոդվածում ներկայացված վիճակագրական տվյալների վերլուծությունն ու ընդհանրացումը էլ ավելի ամբողջական են դարձնում հարկադրված պատերազմի հետևանքները: Աղյուսակային վերլուծությունը հնարավորություն է տալիս արդյունքները համեմատելու մի քանի տարվա կտրվածքով:

Վերլուծություն: Արցախի Հանրապետությունը, անկախության հռչակումից և Արցախյան գոյամարտից հետո, 1998 թ. Արցախի Հանրապետության ազ-

գային ժողովի ընդունած օրենքով սահմանեց Արցախի Հանրապետության վարչատարածքային նոր կառուցվածքը: Ըստ այդ օրենքի՝ Արցախի Հանրապետությունը բաժանվում էր ութ շրջանի՝ մայրաքաղաք Ստեփանակերտ և 7 շրջան՝ Շուշի, Քաշաթաղ, Շահումյան, Մարտակերտ, Ասկերան, Մարտունի և Հադրութ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Արցախի Հանրապետության տարածքը և բնակչությունը՝ ըստ վարչատարածքային բաժանման, 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ[1]

	Տարածքը, կմ²	*Բնակչությունը, 1000 մարդ*
Ընդամենը	11803,16	148,8
Ստեփանակերտ	29,12	58,3
Ասկերանի շրջան	1165,75	17,0
Հադրութի շրջան	1876,76	12,0
Մարտակերտի շրջան	2045,10	19,8
Մարտունու շրջան	1098,33	21,3
Շահումյանի շրջան	1829,89	3,3
Շուշիի շրջան	381,64	5,4
Քաշաթաղի շրջան	3376,57	11,7

Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում (2020 թ. սեպտեմբերի 27–նոյեմբերի 10) և զինադադարի պայմանագրի ստորագրումից հետո Արցախի Հանրապետության շրջաններից Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել.

- Հադրութի շրջանը,
- Քաշաթաղի շրջանը,
- Շահումյանի շրջանը,
- Մարտունու շրջանի 36 համայնքից 7-ը (Զարդանաշեն, Թաղավարդ գյուղը, Շեխեր, Ջիվանի, Սարգսաշեն, Վազգենաշեն, Ներքին Ճարտար քաղաքը),
- Մարտակերտի շրջանի 43 համայնքից 8-ը (Թալիշ, Հովտաշեն, Մատաղիս, Նոր Այգեստան, Նոր Կարմիրավան, Նոր Հայկաջուր, Նոր Մարաղա, Նոր Սեյսուլա),
- Ասկերանի շրջանի 42 համայնքից 8-ը (Ակնաղբյուր, Ավետարանոց, Արմենակավան, Ջրաղացներ, Մադաթաշեն, Սղնախ, Մոշխմհատ, Ուղտասար),
- Շուշիի շրջանից՝ Շուշի քաղաքը, Քարին տակ, Քիրսավան:

Ըստ նախնական տվյալների՝ 2020 թ. պատերազմի հետևանքով թշնամու վերահսկողության տակ անցավ Արցախի Հանրապետության տարածքի շուրջ 67%-ը: Արցախի Հանրապետության տարածքն այսօր կազմում է մոտավորապես 3170 կմ²:

Պատերազմը ծանր հարված հասցրեց նաև մարդկային ռեսուրսներին՝ շուրջ 4000 զոհ, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացած 9000 անձ և 90.000 բռնի տեղահանված:

Հայաստանի Հանրապետությունը Արցախի Հանրապետության կառավարությանը և քաղաքացիներին աջակցելու նպատակով մշակել է շուրջ 2 տասնյակ միջոցառում: Մասնավորապես. ՀՀ Կառավարությունը ֆինանսական

[1] Աղյուսակը կազմվել է «Արցախի վիճակագրական տարեգիրք, 2020» 28-րդ էջի տվյալների հիման վրա:

աջակցություն է տրամադրել Արցախում հաշվառված քաղաքացիներին (բյուջեից ծախսվել է 30 մլրդ ՀՀ դրամ), Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված Արցախի քաղաքացիներին (բյուջեից վճարվել է 8.4 մլրդ ՀՀ դրամ), Արցախում անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին (600 մլն ՀՀ դրամ), անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին (1.5 մլրդ ՀՀ դրամ), ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին (90 մլն ՀՀ դրամ), Արցախի՝ մինչև 5 տարեկան երեխաներին (28 մլն ՀՀ դրամ), հյուրընկալ ընտանիքներին (2 մլրդ ՀՀ դրամ), քաղաքացիական անձանց շրջանում զոհվածների ընտանիքներին և հաշմանդամություն ստացած անձանց (600 մլն ՀՀ դրամ), վիրավորում ստացած զինծառայողներին (շուրջ 2 մլրդ ՀՀ դրամ), ռազմական գործողությունների ընթացքում ՀՀ տարածքում անշարժ գույքի սեփականատերերին՝ պատճառված վնասի համար (44 մլն ՀՀ դրամ), Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ և Որոտան բնակավայրերի բնակիչներին (470 մլն ՀՀ դրամ), ինչպես նաև՝ ուսման վարձի փոխհատուցում (300 մլն ՀՀ դրամ, նվիրաբերություն (1 մլրդ ՀՀ դրամ), բյուջետային վարկավորում (5 մլրդ ՀՀ դրամ 2020 թ.): Իսկ 2021-ի հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ Կառավարությունը Արցախին է փոխանցել շուրջ 199 մլրդ ՀՀ դրամի աջակցություն[1]:

Տնտեսագիտական վերլուծության հիմնական ցուցանիշներից է ՀՆԱ-ն՝ համախառն ներքին արդյունքը: Այն որոշակի ժամանակահատվածում տվյալ երկրում արտադրված պատրաստի ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքն է[2]: Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ՀՆԱ շարժընթացը, 2015-2021 թթ. կտրվածքով (2021 թ. արդյունքը կանխատեսում է), ներկայացված է գծապատկեր 1-ում:

Հայաստանի Հանրապետության տնտեսության համար չափազանց կարևոր նշանակություն ունի հատկապես հանքարդյունաբերությունը: Եթե ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքում 2000 թ. հանքահումքային արտադրանքին բաժին էր ընկնում ընդամենը 11.5%[3], ապա 2020 թ.՝ 32.1%[4]:



Գծապատկեր 1. ***Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ՀՆԱ-ների շարժընթացը, մլն ՀՀ դրամ[5]***

---

[1] https://www.gov.am/files/docs/4520.pdf

[2] https://www.imf.org/external/pubs/ft/fandd/basics/gdp.htm

[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 122:

[4] Տե՛ս «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021», էջ 601:

[5] Գծանկարը մշակել է հեղինակը՝ օգտագործելով ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները:

Սոթքի հանքը ՀՀ հանքարդյունաբերության կարևորագույն կազմակերպություններից և խոշորագույն հարկ վճարողներից մեկն է: Մասնավորապես, 2020 թ. «Գեոպրոմայնինգ գոլդ»-ը 1000 խոշոր հարկ վճարողների թվում 4-րդ տեղն է զբաղեցրել[1]: Սակայն, Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով նոյեմբերի 25-ից Շահումյանի շրջանը հայաթափվել և ամբողջությամբ անցել է Ադրբեջանի զորքերի վերահսկողության տակ, հետևաբար՝ Սոթքի հանքի զգալի մասը, նոյեմբերի 25-ից սկսած, չի աշխատում: Բնականաբար, այս երևույթն իր բացասական ազդեցությունն է թողնում ոչ միայն ՀՀ տնտեսության, այլև տարածքի բնակչության զբաղվածության վրա:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Արցախյան երկրորդ պատերազմը նպաստել է ՀՀ պետական պարտքի աճին, մասնավորապես, 2020 թ. տարեվերջի համեմատ, Հայաստանի պետական պարտքը 2021-ին աճել է 1 մլրդ 240.73 մլն ԱՄՆ դոլարով, իսկ արտաքին պարտքը՝ 701.342 մլն ԱՄՆ դոլարով[2]:

ՀՀ Կառավարության պետական պարտքը 2020 թ. հատել է կարմիր գծի շեմն ու խախտել հարկաբյուջետային ոսկե կանոնը՝ գերազանցելով ՀՆԱ-ի 60%-ի շեմը[3]: Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը հատել է 9 միլիոն ԱՄՆ դոլարի շեմը հասնելով՝ 9,225.6-ի[4]:

44-օրյա պատերազմի հետևանքները կարող են հանգեցնել պարենային անվտանգության և ապահովման լրջագույն խնդիրների ոչ միայն Արցախում, այլ նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ մոտավոր հաշվարկներով տարեկան սպառվում է 500-600 հազար տոննա հացահատիկ: Արցախի Հանրապետությունն ապահովել է դրա 20-30%-ը, որն այսօր արդեն «բաց է մնում»:

Աղյուսակ 2

ԱՀ-ում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի տվյալները առ 2021 թ. սեպտեմբերի 27-ը [5]

Շրջաններ	Ընդհանուր բերքահավաքի տարածությունը, հա		Ցորենի բերք. /տար., հա		Գարու բերք. /տար., հա		Եգիպտացորենի բերք. /տար., հա		Հաճարի բերք. /տար., հա		Վարսակի բերք. /տար., հա	
	առ 21.09.2020	առ 27.09.2021	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-
Ընդամենը ԱՀ-ում	**68906.8**	19426.4	29471.0	10135.4	38149.2	7638.7	-	216.6	1146.6	1435.7	140.0	-
Ասկերան	11555.6	5965.8	8347.5	3984.9	2750.9	1146.4	-	177.5	457.2	657.0	-	-
Հադրութ	15555.9	-	3438.2	-	12110.7	-	-	-	7.0	-	-	-
Մարտակերտ	7316.2	6033.4	2313.6	2106.6	4852.6	3285.8	-	15.0	150.0	626.0	-	-
Մարտունի	15692.6	6937.2	9683.7	3824.9	5977.5	3006.5	-	24.1	31.4	81.7	-	-
Շահումյան	114.5	-	77.0	-	26.5	-	-	-	11.0	-	-	-
Շուշի	217.0	40.0	175.0	19.0	7.0	-	-	-	35.0	21.0	-	-
Քաշաթաղ	18455.0	450.0	5436.0	200.0	12424.0	200.0	-	-	455.0	50.0	140.0	-

[1] https://cdn.fbsbx.com/v/t59.2708-21/271546385_635548224530530_4484934937221551188_n.xlsx/1000-%D5%AD%D5%B8%D5%B7%D5%B8%D6%80-%D5%B0%D5%A1%D6%80%D5%AF-%D5%BE%D5%B3%D5%A1%D6%80%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80-2020.xlsx?_nc_cat=100&ccb=1-5&_nc_sid=0cab14&_nc_ohc=orD9epQBOYwAX-4NfBJ&_nc_ht=cdn.fbsbx.com&oh=03_AVInr2yaJHbrD-XrUHiSCHrtiu4tqkFiLdsJnZ1mNsA3FQ&oe=61EBAA0E&dl=1

[2] https://www.lragir.am/2021/12/06/685959/

[3] https://hetq.am/hy/article/138236

[4] https://www.minfin.am/website/images/files/Monthly_Report_December_2021_am.pdf

[5] http://stat-nkr.am/files/press_releases/2021/BERQAHAVAQ_27_09_2021.pdf

Շրջաններ	Փաստացի հավաքված բերքը, ց		Ցորենի հավաքված բերքը, ց		Գարու հավաքված բերքը, ց		Եգիպտացորենի հավաքված բերքը, ց		Հաճարի հավաքված բերքը, ց		Վարսակի հավաքված բերքը, ց	
	առ 21.09.2020	առ 27.09.2021	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-
Ընդամենը ԱՀ-ում	868878.8	132150.9	412124.0	84066.9	145562.8	34592.6	-	2823.0	9092.0	10668.4	2100.0	-
Ասկերան	159111.0	49758.0	120561.0	36535.0	35309.0	6372.0	-	2303.0	3241.0	4548.0	-	-
Հադրութ	273720.0	-	56951.0	-	216727.0	-	-	-	42.0	-	-	-
Մարտակերտ	45654.6	32326.8	17794.6	14009.0	25723.0	12496.0	-	90.0	2137.0	5731.8	-	-
Մարտունի	226503.6	49155.1	155446.4	33029.9	70848.2	15424.6	-	430.0	209.0	270.6	-	-
Շահումյան	865.8	-	668.5	-	128.3	-	-	-	69.0	-	-	-
Շուշի	3400.0	196.0	2956.0	133.0	94.0	-	-	-	350.0	63.0	-	-
Քաշաթաղ	159623.8	715.0	57746.5	360.0	96733.3	300.0	-	-	3044.0	55.0	2100.0	-

Շրջաններ	Բերքատվությունը, ց/հա		Ցորենի բերքատ., ց/հա		Գարու բերքատ., ց/հա		Եգիպտացորենի բերքատ., ց/հա		Հաճարի բերքատ., ց/հա		Վարսակի բերքատ., ց/հա	
	առ 21.09.2020	առ 27.09.2021	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-	-//-
Ընդամենը ԱՀ-ում	12.6	6.8	14.0	8.3	11.7	4.5	-	13.0	7.9	7.4	15.0	-
Ասկերան	13.8	8.3	14.4	9.2	12.8	5.6	-	13.0	7.1	6.9	-	-
Հադրութ	17.6	-	16.6	-	17.9	-	-	-	6.0	-	-	-
Մարտակերտ	6.2	5.4	7.7	6.7	5.3	3.8	-	6.0	14.2	9.2	-	-
Մարտունի	14.4	7.1	16.1	8.6	11.9	5.1	-	17.8	6.7	3.3	-	-
Շահումյան	7.6	-	8.7	-	4.8	-	-	-	6.3	-	-	-
Շուշի	15.7	4.9	16.9	7.0	13.4	-	-	-	10.0	3.0	-	-
Քաշաթաղ	8.6	1.6	10.6	1.8	7.8	1.5	-	-	6.7	1.1	15.0	-

Աղյուսակ 2-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ եթե 2020 թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ հացահատիկային մշակաբույսերի ընդհանուր բերքահավաքի տարածությունը ԱՀ-ում կազմել է 68906.8 հա, ապա 2021 թ. նույն ժամանակաշրջանում այն արդեն նվազել է 494804 հա-ով և կազմել ընդամենը 19426.4 հա: Եթե ԱՀ-ի 7 շրջանից 5-ում բերքահավաքի տարածությունը նվազել է, ապա Հադրութի և Շահումյանի շրջանների բերքահավաքի տարածություններն ուղղակի անցել են թշնամու վերահսկողության ներքո: Նույն ժամանակաշրջանում գարու բերքահավաքի տարածությունը նվազել է 30510.5 հա-ով, ցորենինը՝ 19335.6 հա-ով, վարսակինը՝ 140 հա-ով: Եթե 2020 թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ փաստացի հավաքած բերքը կազմել է 868878.8 ց, ապա 2021 թ. նույն ժամանակաշրջանում այն արդեն նվազել է 736727.9 ց-ով և կազմել ընդամենը 132150.9 ց: Կամ կարող ենք ասել, որ 2021 թ. սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ԱՀ-ում փաստացի հավաքած բերքը նվազել է 84.8%-ով: 2021 թ. սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գարու փաստացի հավաքած բերքը նվազել է 92.2%-ով, ցորենինը՝ 79.6%-ով, իսկ վարսակինը՝ 100%-ով:

Ըստ մասնագետների՝ մեկ հեկտարից ստացվում է 1.7-1.9 տոննա ցորեն, սակայն խիստ անհրաժեշտության և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու դեպքում հնարավոր է ստանալ 8-10 տոննա:

Պատերազմի ընթացքում և հետպատերազմյան զարգացումների հետևանքով պարենային ճգնաժամը Հայաստանին և Արցախին սպառնում է ոչ միայն հացահատիկային մշակաբույսերի կտրվածքով, այլև անասնապահության:

Պատերազմի ընթացքում գյուղացիների զգալի մասը պաշտպանում էր իր հողը՝ անուշադրության մատնելով սեփական անասուններին, ինչի հետևան-

քով դրանց գլխաքանակի զգալի մասը ոչնչացվեց ադրբեջանական կրակահերթերից և տարբեր տրամաչափի զինտեխնիկայի օգտագործումից:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անասնապահների համար հիմնական խնդիրներն առաջացան եռակողմ համաձայնագրի ստորագրումից հետո, քանի որ Արցախի և Սյունիքի անասնապահներն իրենց կենդանիներին արածեցնելու էին տանում Որոտանի (Կուբաթլու), Մեխակավանի (Ջեբրաիլ) և Կովսականի (Զանգելան) արոտավայրերում:

2019 թ. ընդունված «Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության» ծրագրում նշված է, որ Սյունիքի մարզը առաջատարն է ոլորտում, և վերջինիս բաժին է ընկնում ոչխարի գլխաքանակի 16.9%-ը[1]:

Եթե մինչ պատերազմը Սյունիքն անասնապահության զարգացվածության մակարդակով առաջատարն էր Հայաստանի Հանրապետությունում, ապա պատերազմի ավարտից հետո պատկերը փոխվեց: Սկսվեց անասունների մասսայական սպանդ ոչ միայն արոտավայրերի բացակայության, այլև առկա արոտավայրերում առաջացած վտանգների պատճառով:

Սպանդի հետևանքով մսի առաջարկի ծավալների մեծացումը նպաստեց վերջինիս շուկայական գնի կարճաժամկետ նվազմանը: Բնականաբար, հետագայում անասունների գլխաքանակի նվազմանը զուգահեռ, հանրապետությունում մսի գինը կրկին բարձրացավ:

Երկար տարիներ գյուղատնտեսությունը Հայաստանի և Արցախի գյուղական համայնքների բնակիչների հիմնական զբաղմունքն ու աշխատանքն է եղել, հետևաբար՝ նաև եկամտի հիմնական կամ էլ միակ աղբյուրը:

Արցախի Հանրապետության տարածքային կորուստներն իրենց զգալի բացասական ազդեցությունը թողեցին նաև հայկական երկու հանրապետությունների էներգետիկ ոլորտների վրա:

Վերջին տարիներին Արցախում սահուն կերպով ավելանում էր ՀԷԿ-երի քանակը, իսկ արցախցիների շրջանում օգտագործվող էլեկտրաէներգիայի ծավալի կայունությունը հնարավորություն էր ընձեռում ԱՀ-ին վաճառելու ավելցուկ էլեկտրաէներգիան:

Հայաստանի Հանրապետությունը երկար տարիներ միաժամանակ եղել է ոչ միայն էլեկտրաէներգիա վաճառող, այլ նաև ներմուծող երկիր: Տարեցտարի ՀՀ-ում աճում էին Արցախից ներմուծված էլեկտրաէներգիայի ծավալները, ինչը հնարավորություն էր տալիս, մի կողմից, ապահովելու Արցախի տնտեսության ակտիվությունը, իսկ մյուս կողմից՝ նպաստում էր էժան էլեկտրաէներգիայով ՀՀ ապահովվածությանը:

Արցախի Հանրապետությունում մինչ 44-օրյա պատերազմը գործում էր 37 հիդրոէլեկտրակայան, և կառուցման փուլում էին մի շարք փոքր ՀԷԿ-եր: Պատերազմի բացասական ելքի հետևանքով, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքների հետ միաժամանակ, Արցախը կորցրեց նաև իր հիդրոէլեկտրակայաններից 29[2]: Ներկայումս Արցախում գործում է ընդամենը 8 հիդրոէլեկտրակայան:

2020 թ. դեկտեմբերից Արցախի Հանրապետությունից դադարեց էլեկտրաէներգիայի մատակարարումը, իսկ Հայաստանից դեպի Արցախ արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալները շարունակաբար ավելանում են:

---

[1] https://mineconomy.am/media/9028/19-1305.pdf

[2] https://uic.am/14578

Եզրակացություններ և առաջարկություններ: Արցախի Հանրապետության տարածքային կորուստները ոչ միայն պարենային անվտանգության բազմաթիվ հարցեր առաջ քաշեցին հայկական երկու հանրապետությունում, այլ նաև զգալի բացասական ազդեցություն թողեցին վերջիններիս էներգետիկ ոլորտների վրա:

Ներկայումս Մեծամորի ատոմակայանի և Հրազդան ՋԷԿ-ի աշխատանքների ժամանակավորապես կանգը, Արցախում հսկայաթիվ հիդրոէլեկտրակայանների կորուստը ոչ միայն հանգեցնում են էլեկտրաէներգիայի թանկացմանը և այլ երկրներից ներմուծման ծավալների մեծացմանը, այլև նպաստում են էներգետիկ ճգնաժամի հավանականության մեծացմանը միաժամանակ և՛ Արցախի Հանրապետությունում, և՛ Հայաստանի Հանրապետությունում:

Բնականաբար, Արցախի Հանրապետության տնտեսության առանձին ճյուղերում գրանցված անկումներն իրենց բացասական և խորքային ազդեցությունն են թողնում նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա:

Ուսումնասիրության արդյունքում եզրակացրել ենք, որ անհրաժեշտ է առավել մանրակրկիտ և ոլորտային վերլուծություն իրականացնել և՛ Արցախի Հանրապետությունում, և՛ Հայաստանի Հանրապետությունում, քանի որ յուրաքանչյուր խնդիր լուծելու կամ հավանական խնդիրը կանխելու համար անհրաժեշտ է իմանալ վերջինիս խորությունը և վտանգավորության աստիճանը:

Տնտեսական բարձր ցուցանիշներ ապահովելու համար առաջնային, բայց ոչ եզակի անհրաժեշտ գործոններ են կայուն և ապահով դրամավարկային, հարկաբյուջետային, քաղաքական և անվտանգային համակարգերը, ուստի առաջարկվում է դրանք պահպանել և զարգացնել հնարավոր բոլոր ուղղություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արցախի վիճակագրական տարեգիրք, 2020:
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-դեկտեմբերին:
4. Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 2020:
5. https://www.gov.am/files/docs/4520.pdf
6. https://www.imf.org/external/pubs/ft/fandd/basics/gdp.htm
7. https://cdn.fbsbx.com/v/t59.2708-21/271546385_635548224530530_4484934937221551188_n.xlsx/1000-%D5%AD%D5%B8%D5%B7%D5%B8%D6%80-%D5%B0%D5%A1%D6%80%D5%AF-%D5%BE%D5%B3%D5%A1%D6%80%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80-2020.xlsx?_nc_cat=100&ccb=1-5&_nc_sid=0cab14&_nc_ohc=orD9epQBOYwAX-4NfBJ&_nc_ht=cdn.fbsbx.com&oh=03_AVInr2yaJHbrD-XrUHiSCHrtiu4tqkFiLdsJnZ1mNsA3FQ&oe=61EBAA0E&dl=1
8. https://www.lragir.am/2021/12/06/685959/
9. https://hetq.am/hy/article/138236
10. http://stat-nkr.am/files/press_releases/2021/BERQAHAVAQ_27_09_2021.pdf
11. https://mineconomy.am/media/9028/19-1305.pdf
12. https://uic.am/14578
13. https://www.minfin.am/website/images/files/Monthly_Report_December_2021_am.pdf
14. https://www.minfin.am/hy/page/amsakan_ampop_teghekagir/
15. https://armstat.am/am/
16. http://www.stat-nkr.am/

НАНЕ КАРАПЕТЯН
Управление, магистратура, 1 –й курс

НЕГАТИВНОЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ВЛИЯНИЕ УТРАЧЕННЫХ ТЕРРИТОРИЙ РЕСПУБЛИКИ АРЦАХ НА ЭКОНОМИКУ РА

Ключевые слова: *Республика Арцах, сельское хозяйство, продовольственная безопасность, территория, гидроэлектростанция*

Вторая Арцахская война, начавшаяся 27 сентября 2020 года и завершившаяся 10 ноября, нанесла глубокий удар по двум армянским республикам. Отличавшаяся беспрецедентной жестокостью 44-дневная война привела к значительным территориальным и людским потерям. Вторая Арцахская война оказала глубокое негативное влияние на экономику не только Республики Арцах, но Республики Армения. В статье анализируются основные проблемы, возникшие вследствие войны в отдельных отраслях экономики Республики Арцах, и их влияние на экономику Республики Армения, а также рассмотрены проблемы продовольственной безопасности, угрожающие двум армянским республикам.

NANE KARAPETYAN
Management
Public Administration

THE NEGATIVE SOCIO-ECONOMIC IMPACT OF THE TERRITORIAL LOSSES OF ARTSAKH REPUBLIC ON ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *Republic of Artsakh, agriculture, food security, territory, hydroelectric power plant*

The second Artsakh war, which started on September 27, 2020 and ended on November 10, caused great issues to the two Armenian republics. The 44-day war, marked by its unprecedented brutality, resulted in significant territorial and human resources losses. The Second Artsakh War had a profound fundamental impact not only on the economy of the Artsakh Republic, but also on the economy of the Republic of Armenia. The paper analyzes the main problems in different branches of the economy of the *Artsakh Republic that* resulted from the war, as well as the issues of food safety that threaten the two republics.

ՍՏԵՓԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Տեղեկատվական համակարգեր, բակալավրիատ, 1-ին կուրս

ԲԻԶՆԵՍՈՒՄ ԱՄՊԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հիմնաբառեր. *բիզնես, ամպ, տեխնոլոգիաներ, արդյունավետություն, գնահատում, կիրառություն, շուկա, վերլուծություն*

Սույն հոդվածում ուսումնասիրվել և վերլուծվել է հաշվողական մեքենաների ու հաշվողական ցանցերի զարգացման արդյունքում առաջացած հեռավար տվյալների հասանելիությունը, որն օգտագործողին թույլ է տալիս տեղեկությունը պահել ամպային ծառայության կողմից հատկացված հիշողությունում և ստանալ այն տնօրինելու հնարավորություն: Հոդվածում, որպես բիզնեսի կազմակերպման մեթոդ, վերլուծվել են